2023, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (623)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Փետրվարի 7-ին

Խորվաթիայի Հանրապետության արտաքին եւ եվրոպական գործերի նախարարի գլխավորած պատվիրակությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Խորվաթիայի Հանրապետության արտաքին եւ եվրոպական գործերի նախարար Գորդան Գրլիչ Ռադմանի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու կարեւոր դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում՝ նշելով, որ այսօր եւս Հայ Եկեղեցին շարունակում է իր այդ կարեւոր առաքելությունը:

Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ պատվիրակության այցը Հայաստան խթան կհանդիսանա երկու երկրների բարեկամական հարաբերությունների զորացման եւ արդյունավետ համագործակցության ամրապնդման համար:

Անդրադարձ կատարելով տարածաշրջանում տիրող դժվարին կացությանը եւ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակմանը՝ Նորին Սրբությունն իր մտահոգությունը հայտնեց Արցախի ժողովրդի խաղաղ եւ ազատ ապրելու իրավունքի դեմ նոր ոտնձգությունների ու դրանց հետեւանքով ստեղծված հումանիտար աղետի առնչությամբ: Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց միջազգային հանրության՝ այդ թվում Խորվաթիայի հետեւողական ջանքերի գործադրումը Լաչինի միջանցքի վերաբացման, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքում հայկական հոգեւոր ու պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ, ինչպես նաեւ Հայաստանի սահմանների նկատմամբ Ադրբեջանի դրսեւորած նկրտումների կանխման գործում:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ հայ գերիների վերադարձման խնդրին՝ ակնկալելով, որ Խորվաթիայի իշխանությունները եւս գործուն քայլեր կձեռնարկեն այս ուղղությամբ:

Իր հերթին նախարար Գորդան Գրլիչ Ռադմանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, ընդգծեց, որ պատվիրակության այցը Հայաստան նաեւ նպատակ է հետապնդում ըստ ամենայնի ծանոթանալու տարածաշրջանում ստեղծված իրավիճակին եւ իրենց նպաստը բերելու խնդրի խաղաղ կարգավորմանը:

Փետրվարի 10-ին

Հայաստանում Պորտուգալիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Պորտուգալիայի Հանրապետության նորանշանակ դեսպան Մադալենա Ֆիշերին:

Հայոց Հայրապետը, շնորհավորելով դեսպանին նշանակման կապակցությամբ, մաղթեց վերջինիս արդյունավետ առաքելություն՝ ի նպաստ հայ-պորտուգալական բարեկամական կապերի առավել զորացման:

Անդրադառնալով տարածաշրջանում առկա իրավիճակին եւ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակմանը՝ Նորին Սրբությունն իր մտահոգությունը հայտնեց արցախահայության անվտանգ ու խաղաղ ապրելու իրավունքի դեմ ոտնձգությունների եւ դրանց հետեւանքով ստեղծված հումանիտար աղետի առնչությամբ: Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց միջազգային հանրության ջանքերի գործադրումը Լաչինի միջանցքի վերաբացման եւ արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցում: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Պորտուգալիայի իշխանությունները եւս նշանակալի ներգրավվածություն կունենան տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման գործում:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդրին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց, որ Պորտուգալիայում գործող «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը կարեւոր ավանդ է ունեցել հայ ժողովրդի կյանքում, որի աջակցությամբ 1954 թվականին նաեւ իրականացվել է Մայր տաճարի հիմնանորոգումը:

Իր հերթին դեսպան Մադալենա Ֆիշերը եւս ընդգծեց Լաչինի միջանցքի վերաբացման անհրաժեշտությունը: Դեսպանը նաեւ կարեւորեց կրթության ոլորտում Հայաստանի եւ Պորտուգալիայի համագործակցության խորացումն ու ընդլայնումը:

Փետրվարի 14-ին

Կորեա–Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կորեա–Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Կիհուն Սոնի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունը, գոհունակություն հայտնելով երկու երկրների միջեւ հաստատվող գործակցային հարաբերությունների առնչությամբ, հույս հայտնեց, որ պատվիրակության այցը Հայաստան նոր խթան կդառնա հայ-կորեական կապերի առավել խորացման համար:

Հայոց Հայրապետը վերհիշեց դեռեւս 2013 թ. Հարավային Կորեա կատարած իր այցը՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր համագումարի առիթով:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց տարածաշրջանում տիրող կացությանը եւ հետպատերազմյա մարտահրավերներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մտահոգությունը հայտնեց Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով ստեղծված հումանիտար աղետի, ինչպես նաեւ գերիների վերադարձման եւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության անխաթար պահպանման առնչությամբ՝ կարեւորելով միջազգային հանրության հետեւողական ջանքերի գործադրումը՝ կանխարգելելու Ադրբեջանի որդեգրած ծավալապաշտական քաղաքականությունը:

Իր հերթին Կիհուն Սոնը կարեւոր նկատեց ջանքերի ներդրումը՝ ուղղված հայ-կորեական համագործակցության սերտացմանը: Պատվիրակության ղեկավարը կարեւորեց նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատման անհրաժեշտությունը:

Տյառնընդառաջի նախատոնակ Մայր Աթոռում

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Տյառնընդառաջի տոնը, որը խորհրդանշում է 40-օրյա մարդեղացյալ Աստվածորդու՝ մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Տերունական տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Սուրբ Գայանե եկեղեցում կատարվեց երեկոյան ժամերգություն: Հավարտ ժամերգության, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ նախատոնակ, որից հետո կատարվեց տարվա առաջին Անդաստանի կարգը՝ օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Այնուհետեւ «Քրիստոս փառաց» տաղի երգակցության ներքո Սուրբ Գայանե եկեղեցու խորանի կանթեղից վառված մոմով Նորին Սրբությունը Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու լույսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին: Նախատոնակից հետո հոգեւորականների թափորն ուղղվեց դեպի միաբանական շենքի շրջափակ, ուր ներկայությամբ հավատացյալ հայորդիների, ձեռամբ Հայոց Հայրապետի, վառվեց Տյառնընդառաջի խարույկը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տյառնընդառաջի տոնը հռչակել է Նորապակների օրհնության օր: Այս կապակցությամբ փետրվարի 14-ին՝ եկեղեցիներում մատուցված սուրբ պատարագի ավարտին, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Ծավակցագիր Սիրիայի Հանրապետության նախագահին

Փետրվարի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցել է Սիրիայի Հանրապետության նախագահ Բաշար Ալ Ասսադին՝ տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով բազմաթիվ զոհերի ու ավերածությունների կապակցությամբ:

Իր ցավակցագրում Նորին Սրբությունը մխիթարություն ու սփոփանք է մաղթել անմեղ զոհերի վշտակիր հարազատներին եւ շուտափույթ ապաքինում՝ վիրավորներին: Հայոց Հայրապետը հայցել է, որ Բարձրյալն Իր օրհնության ներքո պահի բարեկամ Սիրիային՝ պագեւելով խաղաղ ու ապահով օրեր:

Տյառնընդառաջի տոն Մայր Աթոռում

Փետրվարի 14-ին՝ 40-օրյա մանուկ Հիսուս Քրիստոսի տաճարին ընծայման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Սուրբ Գայանե վանքում մատուցվեց սուրբ պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը: Իր քարոզում հայր սուրբն անդրադարձավ տոնի խորհրդին՝ մարդ եւ Աստված հանդիպման կարեւորությանը. «Այդ սպասված հանդիպումը կարող է հիմնովին փոխել յուրաքանչյուրիս կյանքը, վերափոխել, վերադասավորել նույն կյանքի հանդեպ մեր առաջնայնություններն ու պատկերացումները՝ հնարավորություն տալով գլխավորը զանազանել երկրորդականից, անժամանակը՝ ժամանակավորից, հոգեւորը՝ նյութականից, հայրենիքը՝ պարզ հողից: Միայն այս դեպքում կսկսենք այլ աչքերով նայել մեր ապրածին, վրա հասած փորձություններին, մեզ շրջապատող մարդկանց վարքին եւ ավելի ուշադրություն կդարձնենք հոգեւոր-բարոյական արժեքներին, այսինքն՝ կմտածենք եւ կգործենք քրիստոնեաբար: Եվ այդ ժամանակ աստվածատուր կյանքը կդառնա ավելի հետաքրքիր ու նպատակասլաց, իսկ ժամանակավոր դժվարությունները եւ փոթորիկները՝ Տիրոջով հաղթահարելի»: Հայր Զաքարիան նաեւ հավելեց, որ Աստծու հետ հանդիպումն առավել ամբողջական է դառնում, երբ մասնակցում ենք սուրբ պատարագին եւ սուրբ հաղորդություն ստանում:

Սրբազան արարողության ավարտից հետո, հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Այնուհետեւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող նորապսակ սարկավագներին՝ ուղեկցությամբ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու հայրապետական պատգամը փոխանցեց սարկավագներին՝ նշելով, որ իր համար՝ իբրեւ Հայոց Հայրապետի, հաճելի է տեսնել, թե ինչպես են սարկավագներն ընտանիքներ կազմում: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ շատերը, Աստծու կամոք, մոտ ապագայում իրենց նվիրյալ ծառայությունը կբերեն Հայ

Եկեղեցու անդաստանում՝ որպես ամուսնացյալ քահանաներ:

Հայոց Հայրապետն անսահման երջանկություն մաղթեց երիտասարդ զույգերին, աստվածային սեր եւ խաղաղություն՝ նրանց նորակազմ ընտանիքներին:

Վարդապետական թեզի պաշտպանություն եւ գավազանի տվչություն

Փետրվարի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետական աստիճան ստանալու համար «Վանականների ուխտադրության կարգը Հայոց Եկեղեցում» թեմայով թեզ պաշտպանեց Մայր Աթոռի միաբան Տ. Անանիա աբդ. Ծատուրյանը:

Հանձնաժողովը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին նաեւ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանը, Մասյացոտնի թեմի առաջնորդ Տ. Գեւորգ եպս. Սարոյանն ու Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ եւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանը:

Պաշտպանության ընթացքում հայր սուրբը ներկայացրեց իր վարդապետական թեզը եւ պատասխանեց հանձնաժողովի անդամների հարցերին:

Հավարտ բանավոր պաշտպանության՝ քննիչ հանձնախումբը դրական եզրակացություն տվեց վարդապետական թեզի պաշտպանությանը եւ արժանի համարեց

Տ. Անանիա աբդ. Ծատուրյանին ներկայացնելու մասնավոր վարդապետության աստիճանի տվչության:

Նույն օրը, ձեւավորված ավանդույթի համաձայն, Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Մայր Աթոռի միաբան Տ. Արարատ եպս. Գալթագճյանի, մասնավոր վարդապետության աստիճան տրվեց Տ. Անանիա աբդ. Ծատուրյանին:

Այնուհետեւ հայր Անանիային ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի եւ Մայր Աթոռի միաբան Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Նորին Սրբությունը շնորհավորեց եւ իր պատգամն ու օրհնությունը բերեց հայր սուրբին՝ բարձր գնահատելով նրա երկարամյա նվիրյալ եւ խոնարհ ծառայությունը Հայ Եկեղեցու անդաստանում: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ նորընծա վարդապետն առավել պատասխանատվությամբ կշարունակի իր առաքելությունը նաեւ հավատացյալ հայորդիների հոգեւոր կրթության եւ դաստիարակության գործում:

Վերջում Հայոց Հայրապետը վարդապետական ակնակուռ լանջախաչ նվիրեց Անանիա վարդապետին եւ Պահպանիչ աղոթքով օրհնեց նրան:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Տյառնընդառաջ

Փոկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին ընդառաջ գնալու, մեր սրտի դռները Նրա առջեւ բաց անելու սրբազան խորհուրդն է կրում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցում իր ուրույն տեղը զբաղեցնող այս տոնը: Ինչպես մյուս բոլոր տոնախմբությունների, նույնպես եւ Տյառնընդառաջի ակունքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկավետ տնօրինության ու երկրային կյանքի մի հանգրվանն է:

Հիսուս դեռեւս մանուկ էր՝ թույլ եւ անպաշտպան, խոսել էլ չէր կարողանում, սակայն որքա՜ն խոսուն, որքա՜ն ուսուցանելի դաս ու պատգամ է մեզ տալիս Իր ընծայաբերության այս տոնի խորհրդով: Հիսուս Ինքն իսկ է գլխավոր Խորհուրդը. բոլոր խորհուրդները ծագում եւ հանգում են Աստվածորդու որքան սուրբ ու երկնային, նույնքան իրական ու մարմնեղեն Անձին:

Ուրեմն ո՞րն էր Եկեղեցու գլխավոր Խորհրդակատարի՝ մեզ մատուցած այս խորհրդի պատգամը: Ավետարանը պատմում է. «Եվ երբ ութ օրերը լրացան, եւ Նա թլփատվեց, Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում: Երբ որ նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ Նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում.... Արդ, Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար, եւ այդ մարդը արդար ու աստվածավախ էր եւ ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը. եւ Սուրբ Հոգին էր նրա մեջ: Եվ Սուրբ Հոգուց հրամայված էր իրեն մահ չտեսնել, մինչեւ որ տեսներ Տիրոջ Օծյալին: Նա Հոգով առաջնորդված՝ եկավ տաճար, եւ երբ ծնողները բերեցին Հիսուս մանկանը՝ Նրա վրա կատարելու ինչ որ օրենքի սովորության համաձայն էր, Սիմեոնը Նրան իր գիրկն առավ, օրհնեց Աստծուն եւ ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի. որովհետեւ աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ 21–32):

Անսահմանության ու հավիտենականության Աստված սահմանավորության ու ժամանակի մեջ մտավ հանուն մեզ, որպեսզի մեզ եւս արժանի դարձնի երկնային անանց ու մշտնջենավոր բարիքներին: Եվ, ահավասիկ, Քրիստոս Իրեն ենթակա համարեց մարդկային օրենքներին, ու Իր աստվածամարդկային մարմնով կատարեց այդ օրենքները: Տյառնընդառաջի պատումի հոգեւոր պատգամը, սակայն, գլխավորաբար բխում է մարդկային հոգու՝ աստվածային բնակության համար պատրաստ լինելու իրողությունից: Այդպիսի մի կերպար էր Սիմեոն ծերունին, որի «արդար» ու «աստվածավախ» բնորոշումները մեզ տալիս են տոնի խորհուրդը լիարժեք ըմբռնելու բանալին:

Դեռեւս հինկտակարանյան ընկալման համաձայն՝ արդար էր համարվում հայրենի հավատքին՝ միակ ու ճշմարիտ Աստծու դավանանքին անխախտ ու անսասան նվիրում ունեցող անձը. մի առաքելություն, որով զարդարված էին Աբրահամը, Իսահակը, Հակոբն ու մյուս արդարները: Արդարությունը, նույնն է թե՝ Աստծու հանդեպ հավատք ունենալու իրողությունը, զուտ կրավորական բնույթ չուներ ո՛չ Հին եւ ո՛չ էլ Նոր Կտակարանում: Արդարությունն ազդու, ներգործուն կամքի դրսեւորում է, որը պատրաստակամություն է ենթադրում հանուն Աստծու նվիրաբերելու լավագույնը, ինչպես որ Աբրահամն իր ամենաթանկագին զավակին ընծայեց Աստծուն: Ի համեմատություն այս օրինակի՝ նշենք, որ Սիմեոն ծերունին Աստծուն էր նվիրաբերել իր կյանքի երկար ու ձիգ տարիները՝ ծառայելով եւ մշտապես հավատարիմ մնալով Նրան:

Աստծուն ընդառաջ գնալու առաջին հատկանիշը, որ պահանջվում է ճշմարիտ քրիստոնյայից, ինչպես արդեն նշվեց, հավատն է առ Աստված, իսկ ահա երկրորդ նախապայմանը երկյուղածությունն է: Երկյուղածությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ սիրո մեջ թաթախված այն նրբանկատությունը, որը զսպում է մարդկային աստվածասեր հոգուն եւ թույլ չի տալիս մեղանչել՝ այն քաջ գիտակցումով, որ մեղքը խոցում է Արարչին ավելի, քան որեւէ այլ բան: Աստծու հանդեպ երկյուղն է, որ ուղղորդում է դժվարին իրավիճակներում ապավինելու Տիրոջ կամքին եւ ոչ թե սեփական կարողությանն ու զորությանը: Ի հավելումն նշյալի՝ Աստծու հանդեպ երկյուղածությունը նաեւ բացառում է մարդկանց հանդեպ խրոխտ ու հպարտ կեցվածքով հանդես գալը եւ սովորեցնում, որ միակ Ջրաւորն ու Ամենակարողն Ինքը՝ երկնային Տերն է:

Ահավասիկ, եթե աստվածավախ ծերունու նմանողությամբ Տիրոջ հանդեպ հավատք ու երկյուղ ունենանք, նույն Ինքը՝ Տերը, մեզ պիտի լցնի եւ շնորհազարդի Սուրբ Հոգու զորությամբ՝ կարող դարձնելու տեսնել, հաղորդակցվել եւ շոշափել ճշմարիտ Լույսը, որը հայտնություն է անհավատների համար եւ փառք՝ Աստծու ժողովրդի՝ մեզ ամենքիս համար: Մովսեսը եւս Սինա լեռան վրա տեսավ այդ Լույսը, ու նրա աչքերն անզոր եղան դիմագրավելու Տիրոջ փառքի ճառագայթներին: Հիսուս Քրիստոսով արդեն մեզ համար մարմնապես տեսանելի այդ Լույսի ճառագայթները գալիս ու փարվում են ամենքիս հոգուն՝ կամենալով բնակություն հաստատել աստվածային այդ տաճարներում:

Այդ Լույսն ընդունելու, փոխադարձաբար փարվելու եւ Նրան գրկախառնվելու ներուժը, սակայն, ամենքիս կամքից է կախված: Քրիստոս քայլում է մեզ ընդառաջ, ուրեմն ի՞նչ է մնում անել մեզ՝ քրիստոնյաներիս, եթե ոչ Սուրբ Հոգու զորությամբ գոտեւորված՝ ելնել Տիրոջն ընդառաջ ու օրհներգությամբ բացականչել. «Իմ այս մարմնեղեն աչքերը տեսան Քո երկնային փրկությունը, Տե՛ր, որ Խաչի սրբազան Նշանի ճառագայթումով պարուրում է քրիստոնյաներիս: Ուրեմն արի՛ ու բնակվի՛ր իմ հոգու օթեւաններում, որ պատրաստել եմ Քո սրբազան ներկայության համար, որպեսզի նաեւ հոգուս աչքերով անդադար տեսնեմ, զգամ Քո ներկայությունը: Փարվի՛ր ինձ, Տե՛ր, որպեսզի չսասանվեմ, եւ քայլեցրո՛ւ Դու ինձ, ո՛վ մանուկ Հիսուս, Քո կյանքի ամենաճշմարիտ ճանապարհով, որովհետեւ Դու իսկ ես Ճանապարհը, Ճշմարտությունը եւ Կյանքը....»:

Ահա՛ Տյառնընդառաջի հոգեւոր խորհուրդը: Ինչ վերաբերում է տոնի ծիսաարարողակարգային ու ժողովրդական խորհրդաբանությանը, ապա նշենք, որ տոնի նախօրեին՝ երեկոյան ժամերգության ավարտին, Անդաստանի արարողությամբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը, ինչը խորհրդանշում է խստաշունչ ձմռան ավարտը եւ ջերմ գարնան սկիզբը: Այնուհետեւ, ժողովրդական սովորույթի համաձայն, եկեղեցիների բակերում խարույկ է վառվում, ինչի առնչությամբ հարկ է հիշատակել Ս. Գրիգոր Տաթեւացու խոսքերը. «Ինչպես Տիրոջը տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջահերով եւ կանթեղներով ելավ Նրան ընդառաջ, մենք էլ նույն օրինակով կրակ ու ջահ ենք վառում եւ Տիրոջ գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսներն Աստծու պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը, որպես Քրիստոսի ծառա, բերում ենք Նրան ծառայեցնելու»:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տյառնընդառաջի շարական

Կույսից մարմին առած
Նախահավիտյան Բա՜նդ Աստված,
Դու այսօր եկար տաճար՝
Օրենքը կատարելու
Ազգերի փրկության համար:

Դո՛ւ, որ բազմում ես անձեռակերտ Գահին,
Բարեբանվա՜ծդ հրեշտակներից,
Այսօր Սիմեոնի ձեռամբ գրկվեցիր,
Որպեսզի մեզ հավիտենական կյանքն ընծայես:

Դո՛ւ, որ ամենքին մեղքերի շղթաներից
Արձակում պարգեւողն ես,
Այսօր ծերունու աղերսանքներով
Ինձ՝ բազմամեղիս էլ
Արձակի՛ր մահվան կապանքներից
Եվ արժանի՛ դարձրու հավիտենական կյանքին:

Գրաբարից փոխադրությունը՝
Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Մի մոմի խոհերից

Ինձ վառեցիր եւ այժմ նայիր իմ լույսին: Դու վայելում ես իմ պայծառությունը, այն ջերմությունը, որը ես տալիս եմ: Եվ ես երջանիկ եմ, որ կարող եմ այրվել քեզ համար: Եթե այդպես չլիներ, ես կարող էի դրված լինել ինչ-որ մի հին փոշոտ արկղի մեջ՝ անիմաստ, անօգտակար, մոռացված: Ես այրվելով եմ միայն իմաստ ստանում:

Որքան երկար եմ այրվում, այնքան կարճանում եմ, նվազում, հատնում: Գիտեմ, որ միշտ երկու տարբերակ ունեմ՝ կա՛մ մնալ արկղում՝ անձեռնմխելի, մոռացված, մթության գրկում, կա՛մ այրվել՝ կարճանալ, ամեն ինչ տալ հանուն լույսի ու ջերմության: Այնպես որ, ես շարժվում եմ իմ գոյության ավարտին ընդառաջ: Եվ այնուամենայնիվ, ինձ համար ավելի հաճելի ու իմաստալից է ինչ-որ բան տալ կարողանալը, քան սառն ու մռայլ տուփի մեջ պարփակված մնալը...

Նայե՛ք, նույնն է նաեւ ձեր պարագայում, մարդի՛կ: Կա՛մ դուք մեկուսանում եք, մնում ինքներդ ձեզ հետ՝ սառնության ու դատարկության մեջ, կա՛մ մոտենում եք մարդկանց եւ նրանց տալիս ձեր ջերմությունն ու սերը. այդ ժամանակ միայն ձեր կյանքը կիմաստավորվի: Սակայն դրա համար անհրաժեշտ է ինչ-որ բան տալ ձեզանից՝ ինչ-որ բան ձեր ուրախությունից, ձեր ջերմությունից, ձեր ծիծաղից, միգուցե նաեւ ձեր տխրությունից... Դուք առավել հարուստ կդառնաք միայն այն դեպքում, եթե ձեր ունեցածը տաք ուրիշներին: Միայն նրանք, ովքեր երջանկացնում են ուրիշներին, նրա՛նք կարող են իսկապես երջանիկ լինել: Որքան շատ ես այրվում ուրիշների համար, այնքան ավելի լուսավոր է դառնում քո ներսը: Հավատացած եմ՝ շատերի համար մութ է միայն այն պատճառով, որ նրանք վախենում են լույս լինել ուրիշների համար: Մեկ վառվող լույսն ավելին արժե, քան աշխարհի ողջ խավարը: Ուրեմն թույլ տվեք, որ մի հասարակ մոմ ձեզ մի փոքր քաջալերի:

Պատրաստեց Ա. Վ.

Սուրբ Սարգիս զորավար

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցում Սուրբ Սարգսի տոնն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում. այն խորհրդանշում է սերը՝ համամարդկային արժեքներից ամենագեղեցիկն ու վեհը:

Սուրբ Սարգիս զորավարը համաքրիստոնեական մեծագույն սրբերից է: Նրա անվան հետ են կապված բազմաթիվ սրբատեղիներ: Սուրբը հռչակվել է իբրեւ անհաղթ ռազմիկ՝ բարբարոսների դեմ մղված ճակատամարտերում, ինչպես նաեւ գթասիրտ քրիստոնյա՝ իր ունեցվածքից սիրահոժար աղքատներին բաշխող:

Մեծն Կոստանդիանոս կայսրը (285–337 թթ.) արիության համար Սարգսին կարգում է իշխան եւ սպարապետ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Սարգիսը ոչ միայն նշանավոր սպարապետ էր, այլ նաեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր համաձայնությունից՝ նա իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյանները, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Հուլիանոս Ուրացողի օրոք (360–363 թթ.) սկսվում են Եկեղեցու դեմ դաժան հալածանքներ, եւ Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդու՝ Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, որտեղ թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է դեպի Պարսկաստան՝ Հայոց արքան, փորձելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել պարսից արքունիքում: Շապուհ արքան սիրով ընդունում է զորավարին եւ նշանակում զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայված նվիրումն առ Աստված, նրա աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում են հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Պարսից արքունիքում ծառայելու ընթացքում Սարգիսը բազում քաջագործություններ է կատարում: Այստեղ մոգերն ու մոլեռանդները նրան մեղադրում են պարսկական բանակում քրիստոնեություն տարածելու մեջ, ինչի պատճառով Շապուհը հրամայում է բանտարկել նրան: Այդ ժամանակ սպանվում է Սարգսի որդին՝ Մարտիրոսը՝ ընդունելով նահատակության պսակը: Շապուհը պահանջում է Սարգսից ուրանալ Քրիստոսին, պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարն արիաբար հրաժարվում է՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Որն ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերն ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Նա անսասան է պահում իր հավատքը, որի համար եւ գլխատվում է: Պարսից զորականներից տասնչորս հոգի, որոնք քրիստոնեություն էին ընդունել, սրբի մարմինը փաթաթում են կտավով, որպեսզի թաղեն, սակայն Շապուհի հրամանով սպանվում են նաեւ նրանք: Հավատավորները թաքուն վերցնում են նահատակների եւ սրբի մարմիններն ու ամփոփում Համիան քաղաքում: Հայոց Հայսմավուրքների վկայությամբ՝ հետագայում Մեսրոպ Մաշտոցը սրբի մասունքները բերում է Հայաստան եւ ամփոփում Կարբի գավառի Ուշի գյուղում: Նա այդ վայրում՝ մասունքների վրա, եկեղեցի է կառուցում, որը սիրելի ուխտատեղի է դառնում հավատավոր ժողովրդի համար: Ուխտի օրն ուշեցիների տանը մեծ խնջույք է կազմակերպվում: Նրանք այդ օրը հյուրընկալում են դրսում ապրող իրենց հարազատներին: Հաճախ ուխտավորների թիվն այնքան մեծ է լինում, որ վանք տանող ճանապարհով բարձրանալը շատ դժվար է դառնում:

Սուրբ Սարգսի տոնը շարժական է եւ այս տարի նշվեց փետրվարի 4-ին: Այդ օրը եկեղեցիներում սուրբ պատարագ է մատուցվում: Սուրբ Սարգսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի հաստատած Առաջավորաց պահքը, որը տեւում է հինգ օր: Եվրոպայում Սուրբ Սարգսի հիշատակի օրը նշվել է իբրեւ կեսարացի սրբի տոն՝ փետրվարի 24-ին, իսկ հույները տոնել են հունվարի 20-ին: Հայերը նախկինում այս տոնը նշել են հունվարի 31-ին:

Սուրբ Սարգսի անունով կառուցվել են բազմաթիվ սրբավայրեր, մենաստաններ, գյուղեր, բերդեր, եկեղեցիներ: Թալինի Մաստարա գյուղի մոտ՝ ձորի մեջ, կա մի քար, որն անվանակոչել են «Սուրբ Սարգսի քար»: Ասում են՝ Սարգսի ձին ոտքը խփել է այդ քարին, ինչի համար քարն այդպես են կոչել:

Սուրբ Սարգսի տոնը նշվում է ոչ միայն ծեսով, աղոթքներով ու սուրբ պատարագով, այլ նաեւ ժողովրդական գեղեցիկ, յուրահատուկ ավանդույթներով: Տոնի խորհրդանշական ուտեստը փոխինձն է, որի գործածությունը տոնին նախորդող հինգ օրերին արգելվում է: Սրբի տոնի նախորդ օրը՝ երեկոյան, տանտիրուհիները՝ հատկապես տարեցները, վերցնում էին սկուտեղները, փոխինձ կամ ալյուր լցնում, դնում դռան հետեւը կամ կտուրին՝ հուսալով, որ Սարգիսը կայցելի եւ իր ձիու պայտի հետքը կթողնի փոխինձի կամ ալյուրի վրա: Անսահման երջանկություն էր, երբ առավոտյան ստուգում եւ փոխինձի վրա հայտնաբերում էին ձիու պայտի հետքը:

Մի գեղեցիկ ավանդապատում եւս: Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամեին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրն արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր դստերը կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար աշխատելու գնալ օտար երկիր. մինչ այդ Աշուղն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ: Այդ յոթ տարին շատ ծանր է անցնում Աշուղ Ղարիբի համար. նա զրկված էր իր սիրելիին տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չուներ նրանից, սակայն չէր հուսահատվում: Յոթ տարի շարունակ գիշերուզօր աշխատելով՝ Աշուղ Ղարիբն ունեցվածք է ստեղծում եւ տունդարձի ճամփան բռնում: Ճանապարհը լի էր փորձանքներով եւ խոչընդոտներով: Թվում էր՝ Աշուղ Ղարիբը հույսը պետք է կորցնի, չի հասնի իր սիրած էակին. նա աղոթում է արագահաս սրբին՝ Սարգսին՝ հայցելով նրա օգնությունը: Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իսկույն հայտնվում է իր արագավազ ճերմակ նժույգով բարձրացրած մրրիկի մեջ, Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ հասցնում Շահ-Սանամեի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն ու նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Սուրբ Սարգսի օգնությունն էին հայցում նաեւ այն սիրահար զույգերը, որոնք, իրենց ծնողների կամքին հակառակ, փախել էին միասին: Նրանք գիշերուզօր աղոթում էին, որ բարեգութ սուրբը մեղմացնի, հանդարտեցնի իրենց զայրացած ծնողների սրտերը՝ իրենց ներելու ակնկալիքով: Սրբին աղոթում եւ նրա օգնություն էին խնդրում նաեւ հղի կանայք:

Սուրբ Սարգսին բնորոշում են իբրեւ բարեխոս, ատենահաս, շնորհատու, մուրազատու, արագահաս եւ այլն: Արագահաս սուրբ բնորոշումը խորհրդանշում է սրբի՝ ժամանակին օգնության հասնելը: Պարսիկները նրան կոչել են «անհաղթ վկա պարսից եւ կատարող բոլոր խնդրվածքների»:

Սուրբ Սարգսի տոնին ամենատարածված ավանդույթը աղի բլիթ պատրաստելն ու ուտելն էր, ինչը, ի դեպ, շատ տարածված է նաեւ այսօր: Տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ճաշակում՝ գիշերն իրենց փեսացուին կամ հարսնացուին տեսնելու հույսով. հավատում են, որ այդ գիշեր երազում իրենց ջուր տվողն իրենց կյանքի ընկերն է լինելու: Եթե բաժակը լիքը լինի, ապա շատ երկար են միասին ապրելու:

Նախկինում Սուրբ Սարգսի տոնին երեխաներին նվերներ էին տալիս. մասնավորապես՝ երդիկից կախված գուլպաների մեջ տատիկները սովորաբար դնում էին տոնի ծիսական կերակուրներից եւ մի քանի մանրադրամ: Այս սովորույթն Ուշիում մինչ օրս պահպանվել է, ճիշտ է՝ մի փոքր փոփոխված. այդ օրը ծնողները երեխաների համար նվերներ են գնում:

Ոչ վաղ անցյալում Սուրբ Սարգսի տոնին շատ էին հարսանիքները: Ապագա հարսի տեղը մատնանշելու համար մեծահասակները յուրօրինակ եղանակ էին ընտրել. աթարից ամրոց էին պատրաստում եւ ցախավել դնում գագաթին, ինչը նշանակում էր, որ այդ տանը չամուսնացած աղջիկ կա: Տուկերի տակ քաղցրավենիք էին դնում՝ որպես շնորհակալություն սրբին՝ երջանկության եւ հաջողության համար:

Պատկերագրության մեջ Սուրբ Սարգիսը ներկայացվում է ձիու վրա նստած՝ վիշապին խոցելիս: Սուրբը հաճախ պատկերվում է նաեւ որդու՝ Մարտիրոսի հետ: Տարեգրության մեջ նրա ծննդյան վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան, իսկ մահվան թվականը նշվում է 362-ը կամ 363-ը, նահատակության վայրը՝ Պարսկաստանի Դաղման քաղաքը:

Վերոնշյալ ավանդույթների մեծ մասն այսօր չի կիրառվում, սակայն սիրո բարեխոս սրբի վերաբերյալ զրույցներն ու պատմությունները դարերով փոխանցվել ու մեզ են հասել:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

Սկիզբը՝ 2022-ի թիվ 22–24 – 2023-ի թիվ 2

Մաս Զ. «Բարձրացուցէք»-ի՝ Ս. Ներսես Շնորհալու մեկնությունը

Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկը հայ ոչ թարգմանական՝ ինքնուրույն մատենագրության եզակի ստեղծագործություններից է, որ արժանացել է մեկնության՝ այն էլ հայ աստվածաբանական մտքի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ս. Ներսես Շնորհալի հայրապետի կողմից: Հայտնի է, որ Ս. Ներսես Շնորհալին գիտական բացառիկ ունակությունների, աստվածաբանական բարձր պատրաստվածության շնորհիվ մեծ հեղինակություն է վայելել միջեկեղեցական շրջանակում: Նա թողել է բազմաժանր եւ հարուստ մատենագրական ժառանգություն՝ արձակ երկեր, մեկնություններ, չափածո ստեղծագործություններ, դավանաբանական թղթեր, շարականներ, տաղեր, գանձեր: «Բարձրացուցէք»-ի մեկնությունը նա գրել է Վարդան Հաղբատեցու խնդրանքով, իսկ վերջինս հեղինակել է «Բարձրացուցէք»-ի «Պատճառ»-ը (տե՛ս մաս Ե) ու զետեղել Ս. Ներսես Շնորհալու մեկնության սկզբում:

Ս. Ներսես Շնորհալին մեկնում է «Բարձրացուցէք»-ի բնաբանը՝ նախեւառաջ քննելով, թե ինչու է Դավիթ Անհաղթն սկսել ոչ թե սեփական փիլիսոփայական մտքերով, այլ Դավիթ մարգարեի սաղմոսով, եւ առաջին պատճառ է համարում «համանունությունը»: Իսկ երկրորդ պատճառն այն է, որ Դավիթը մարգարեներից ամենաշատն է անդրադարձել Տիրոջ ծննդյանը, խաչելությանը եւ տնօրինական այլ իրողություններին: Հեղինակն անդրադառնում է «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր» սկսվածքի յուրաքանչյուր բառին: Աստված կարիք չունի բարձրանալու, որովհետեւ երբեք չի խոնարհվում եւ միշտ բարձր է երկրից ու երկնքից: Սակայն Դավիթը «Եկեղեցու մանուկներին» հրամայում է «բարձրացուցանել» Նրան, Ով «բարձրացաւ ի Խաչին եւ զամենեսեան առ ինքն վերածեաց»: ➥ էջ 5

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը...

➥ էջ 4

«Տէր Աստուած» արտահայտության մեջ, ըստ Ս. Ներսես Շնորհալու, «Տէր»-ն արտահայտում է «արքունական» հատկանիշը, որով դատում է մեղավորներին, իսկ «Աստուած»-ը՝ բարեգործական, քանի որ արժանավորներին պարգեւներ է շնորհում: Մեկնիչը երբեմն երկար բացատրություն է տալիս առանձին բառերի եւ արտահայտությունների հետ կապված: Օրինակ՝ «եռափափագ եւ քրիստոսազարդ սուրբ նշանիս եկայք աստուածասէրք երկրպագեսցուք» նախադասության մեջ նա տարբեր տեսանկյուններից մեկնաբանում է «եռափափագ» բառը: «Երեք»-ի մեջ նախ երեւում է թվական արվեստի կատարելությունը, որը բովանդակում է սկիզբը, ընթացքը եւ վերջը: Այս բառն ամփոփում է բոլոր ժամանակները՝ անցյալը, ներկան եւ ապառնին, կամ մարդու կյանքի տարբեր շրջանները՝ մանկությունը, երիտասարդությունը եւ ծերությունը: «Եռափափագ սիրով» նշանակում է նաեւ հոգով, մարմնով եւ մտքով, այսինքն՝ հոգու զորությամբ, մտքի կատարելությամբ ու մարմնի զգայարանների զգաստությամբ, ինչպես նաեւ հավատով, հույսով եւ սիրով:

Խոսելով «Բարձրացուցէք»-ում արտահայտված այն մտքի մասին, որ Խաչը մարդուն փրկում եւ մահից դեպի կյանք է տանում՝ Ս. Ներսես Շնորհալին մահվան իշխանությունը երկակի է բացատրում: Խաչն ազատում է ոչ միայն բնական մահից, այլ նաեւ մեղքից եւ անհավատությունից, քանի որ նրանք, ովքեր ընդունում են ճշմարիտ հավատքը եւ ապաշխարում՝ ապավինելով Խաչին եւ «խաչակցելով» Քրիստոսին, փոխարկվում են անմահ կյանքի համար: Անդրադառնալով Կենաց ծառի եւ Խաչի հարաբերությանը՝ Ս. Ներսես Շնորհալին Դավթի մտքերը մեկնաբանում է գեղեցիկ ձեւակերպումներով: Կենաց ծառը «համաբնակից» է Խաչին, քանի որ այն մահաբեր եղավ, իսկ Խաչը մահվան եւ չարչարանքների գործիք է: Սակայն Խաչը միաժամանակ նման է Կենաց ծառին, քանի որ այն կյանքի գործիք դարձավ: Կյանքի մերձեցումով մահվան հանդեպ տարված հաղթանակը հեղինակը ներկայացնում է որպես բնության օրենք՝ այնպես, ինչպես խավարը ցրվում եւ հալածվում է լույսից:

Ս. Ներսես Շնորհալին առանձնակի խորությամբ վերլուծում է «Բարձրացուցէք»-ի՝ քրիստոսաբանությանն առնչվող հատվածները՝ դրանց մեկնության մեջ արտահայտելով սեփական հայացքները: Խոսելով Աստծու Որդու «ճշմարտիւ եւ ոչ կեղակարծելի» մարդեղության մասին՝ նա ցույց է տալիս, որ Բանի մարդեղության գաղափարն արտահայտված է նաեւ Հին Կտակարանում: Դավիթ Անհաղթի այն արտահայտության մեջ, որ Հին Կտակարանի Տաճարի փոխարեն Նոր Կտակարանում Խաչն է դարձել Աստծու ոտքերի պատվանդան, Ս. Ներսես Շնորհալին «ոտք»-ը մեկնում է իբրեւ «զմարդեղութիւն Բանին Աստուծոյ»: Վկայակոչելով Եսայի մարգարեի տեսիլքը, թե ինչպես էր վեց թեւ ունեցող սերովբեներից յուրաքանչյուրը երկու թեւով ծածկում իր երեսը, երկուսով՝ ոտքերը, եւ երկուսով էլ թռչում, նա ասում է, որ գլուխը խորհրդանշում է աստվածությունը, իսկ ոտքերը՝ մարդկությունը: Թեպետ անպարագիծ Աստված «բովանդակեցաւ» մարմնի մեջ, սակայն մնաց *անշփոթելի* աստվածությամբ եւ *անփոփոխելի* զորությամբ: Աստված անճառելի խոնարհությամբ կույսի որովայնում «պարագրեցաւ» եւ «այսու *բանիւ խնու զբերանս նեստորականացն*, որ ասեն զԲանն մարմին ոչ եղեալ»: Հորից անժամանակ եւ անմարմնապես ծնվածը, անարատ կույսից ծնվեց այնպես, ինչպես Ինքը կամեցավ: Այդ ծնունդը թեեւ մարդկային, սակայն անճառելի եւ անքննելի է: Մարիամը հղիացավ առանց տղամարդու, եւ Քրիստոս ծնվեց անապականաբար: Դավիթ Անհաղթի նման խիստ կարեւորելով «աստուածածին» եզրը՝ Ս. Ներսես Շնորհալին գրում է. «Յամօթ լիցի Նեստորիոս եւ նմանք նոցին, որք միանգամ մարդածին ասացին զՄարիամ եւ ոչ Աստուածածին»: Ինչպես Աստծուն ծնած Կույսն է «աստուածածին», այնպես եւ Աստծուն կրած Խաչը «աստուածախաչ» է: Դավթի օրինակով Ս. Ներսես Շնորհալին քրիստոսաբանական հարցը նույնպես դիտարկում է փրկագործության տեսանկյունից. «....զի մարդոյ մահ անկարելի է փրկութիւն առնել, որպէս ոչ ոք ի մարգարէիցն կարող եղեւ փրկել, բայց Աստուծոյ կարաւտացաք լնուլ մեզ զկենաց պատճառն, զոր ի սկզբանէ բաղձացաք»: Ճշմարիտ Աստծու զորության արտահայտությունը Ս. Ներսես Շնորհալին համարում է մարդկանց եւ աշխարհի հանդեպ ունեցած սերը, հանուն որի Նա Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, իսկ «սիրոյն Աստուծոյ զօրութիւն է Խաչս»: Եթե Հին Կտակարանում մեղքերի քավության համար զոհեր էին մատուցվում, իսկ քահանաները փոխարինում էին միմյանց, ապա Տերը, լինելով ճշմարիտ քահանայապետ, «նոյն ինքն Պատարագ հանապազ զենանի ի փրկութիւն աշխարհի»: Տիրոջ Եկեղեցին հավատում է Խաչի վրա հավիտենական եւ ոչ թե ժամանակավոր Պատարագվածին ու մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը մշտապես կատարում է Պատարագի խորհուրդը:

Որոշ հատվածների մեկնության մեջ Ս. Ներսես Շնորհալին օգտվել է թե՛ հինկտակարանյան եւ թե՛ նորկտակարանյան պարականոն բնագրերից: Առաջին մարդու շիրմի՝ Գողգոթայի գագաթին գտնվելու ավանդության մասին «Բարձրացուցէք»-ում առկա «Զի գագաթն Գողգոթայ, տեղի կառափելոյ, եւ շիրիմ առաջին մարդոյն յեբրայեցւոցն ասացեալ» ակնարկը Ս. Ներսես Շնորհալին առավել մանրամասն է ներկայացնում: Ըստ նրա՝ հրեա պատմագիրները, ավանդությունից տեղեկանալով, մեզ հետեւյալն են հաղորդում. տապանից դուրս գալով՝ Նոյն աշխարհը բաժանեց երեք մասի՝ իր երեք որդիների միջեւ: Անդրանիկ որդու՝ Սեմի բաժինն էր «յարեւելից ընդ սահմանքն հարաւոյ, եւ ի Հրեաստան, զոր եւ Ասորիքն յետոյ Պաղեստին կոչեցին, այսինքն՝ Աւետեաց երկիր»: Նոյը նախաստեղծների՝ տապանի մեջ պահվող նշխարները հանձնում է Սեմին, որը աստվածային տնօրինությամբ դրանք ամփոփում է Գողգոթայում, որտեղից պիտի լիներ փրկությունը: Նույն գագաթին Աստծու Որդին չարչարվեց եւ խաչի վրա մարմնով ճաշակեց մահը՝ Իր բանական հոգին առ Հայր առաքելով առաջին Ադամի օրինակով: Իր մահվամբ Նա սպանեց մահը եւ մահի բռնությունը, որ թագավորել է Ադամից մինչեւ Քրիստոսի գալուստը:

Հետեւելով արեւելաքրիստոնեական ավանդությանը՝ Ս. Ներսես Շնորհալին հոգեւոր կյանքի վերջնանպատակը համարում է քրիստոնյայի աստվածացումը, ինչն արտացոլված է նաեւ խնդրո առարկա երկում: Դավիթ Անհաղթի «առ ի լինել Աստուած ամենայնի յամենայնում» արտահայտության մասին նա գրում է. Աստված ողջ բնության Արարիչն է, բայց մարդիկ, հեռանալով Նրանից, հեռացել են նաեւ աստվածային խնամքից: Սակայն երբ ամեն բան ավարտվի, եւ բոլոր բանական էակները հնազանդությամբ խոստովանեն եւ հավատան Որդու աստվածությանը, «յայնժամ խոստովանեսցի յամենեցունց Աստուած.... *յայնժամ եղիցի Աստուածորդի ի մէջ աստուածացելոց* եւ յամենայնի խոստովանեսցի Տէր եւ Արարիչ»:

Արձակ մեկնությունից հետո Ս. Ներսես Շնորհալին տաղաչափել է «Բարձրացուցէք»-ը: Ոչ միայն գեղագիտական, բանաստեղծական, այլ նաեւ զուտ բովանդակային առումով այս ստեղծագործությունը շատ հետաքրքիր է, քանի որ, «Բարձրացուցէք»-ի չափածո տարբերակը լինելուց բացի, դրա յուրօրինակ մեկնությունն է: Դավիթ Անհաղթի կիրառած բարդ ու խրթին արտահայտությունները եւ բառերը, որոնք լրացուցիչ բացատրության կարիք ունեն, Ս. Ներսես Շնորհալին փոխարինում է առավել պարզերով: Իսկ Դավիթ Անհաղթի դժվարընկալելի



եւ մեկնության կարոտ արտահայտությունները նույնությամբ գործածելու դեպքում էլ տվյալ քառատան մեջ ինչոր կերպ անպայման տալիս է դրանց բացատրությունը:

Մաս Է. Վարդան Արեւելցու՝ Խաչին նվիրված ներբողի մեկնությունը

Ժամանակագրական առումով Դավիթ փիլիսոփայի՝ Խաչի ներբողի վերջին մեկնությունը հեղինակել է Վարդան Արեւելցին: Մեկնությունը ներառված է նրա խմբագրած «Տօնապատճառ» ժողովածուում: Վարդան Արեւելցին մեծապես օգտվել է Ս. Ներսես Շնորհալու մեկնությունից՝ կատարելով յուրօրինակ հավելումներ: Ուշագրավ են հատկապես հեղինակի՝ մեկնության մեջ արտացոլված բնագիտական հայացքները: Նա անգամ բույսերին եւ կենդանիներին բաժանում է մարդու եռամասն կազմության սկզբունքով: Ըստ նրա՝ շնչավորները լինում են երեք տեսակի: Առաջինը շնչավոր տունկերն են, որոնք ունեն «սերմնական, բուսական եւ աճեցական» զորություն: Երկրորդը գազաններն են եւ անասունները, որոնք ունեն «տնական, աճեցական եւ զգայական» զորություն: Բույսերին, զեռուններին, ճանճերին նա անվանում է «անշունչ եւ շնչաւորք», որովհետեւ նրանք ունեն լինելություն, շարժում, ընթացք ու թեեւ կենդանի են, բայց «փոքոյ են հաղորդք կենաց»: Ըստ մեկնիչի՝ Դավիթ Անհաղթը, «կենդանի» ասելով, նկատի ունի հրեշտակներին, դեւերին ու մարդկանց, ինչպես նաեւ ծովում, ցամաքում եւ օդում գտնվող արարածներին: «Կենդան եւ անկենդան» են արեւը, լուսինը, աստղերը եւ լուսատուները, որ ունեն շարժում եւ ընթացք, ինչպես կենդանիները, սակայն չունեն կյանքի մասնիկ: Իսկ ծովը, գետերը եւ աղբյուրները, որոնք շարժվում են Արարչի հրամանով, կենդանածին են, անշունչ եւ անկենդան: Քամին, հողմերը, որ առաջանում են օդից, երկրից ու ծովից եւ ձայն են հանում, բնական զորությամբ շարժական են եւ անկենդան, սակայն կարողանում են շարժել անշարժ եւ շարժվող արարածներին: Մարդիկ եւ անասունները շնչավոր ու կենդանի են, սակայն նրանց ոսկորները, մազերը, եղունգները եւ ճարպն անշունչ ու անկենդան են:

Աստվածային անճառելի շնորհի մասին խոսելիս հեղինակն արտահայտում է այն միտքը, որ պատմության ընթացքում տարբեր ազգեր եւ առանձին անհատներ արժանացել են Աստծու շնորհին, բայց ոչ թե անճառելի, այլ ճառելի: Օրինակ՝ աշխարհի վերաբերյալ դատողություններ են արել պտղոմեականներն ու եգիպտացիները, աստղերի մասին՝ քաղդեացիները: Հիշատակում է նաեւ զրադաշտական կրոնի հիմնադիր Զրադաշտին եւ Նոյին: Փայտի մասին պատմել է Սողոմոնը, իսկ ծովի՝ Հովնան մարգարեն (հմմտ. Առակ. Գ 18, Հովն. Ա 1–16): Խաչի շնորհի մասին խոսել է Պողոս առաքյալը. «Ո՜ խորք մեծութեան իմաստութեան» (Հռովմ. ԺԱ 33): Խաչափայտի անճառելի շնորհը ցույց տալու համար խաչը նախ դասվում է սովորական «փայտերի» շարքին, որոնք նույնպես ունեն շնորհ, քանի որ, օրինակ, դրանց արմատների կամ խեժերի միջոցով կարելի է բժշկվել մարմնական հիվանդություններից: Խաչը նման է մյուս փայտերին չափով, գույնով, ողորկությամբ, սաղարթներով, ծաղկով եւ պտղով, սակայն միայն նրա միջոցով Արարիչն օրհնեց բոլոր երկրավորներին: Խաչը որպես պարգեւ ձրիաբար տրվեց մեզ՝ փառավորվելով նրա վրա բարձրացած Քրիստոսի փառքով: Իսկ կուրամիտ մարդիկ, որոնց վրա չի ծագել Ավետարանի լույսը, հավասար են անբանական ու մարդադեմ գազանի, եւ նրանց Պողոս առաքյալն անվանում է Քրիստոսի Խաչի թշնամիներ (հմմտ. Փիլիպ. Գ 18): Մեկնելով Դավիթ Անհաղթի այն միտքը, որ Խաչը միաժամանակ թե՛ երկրի վրա է եւ թե՛ երկնքում, հեղինակը կրկին օրինակ է բերում բնությունից՝ ասելով, որ արեւն ու լուսինը, երբ ներքին կիսագնդում են, վերեւում լինել չեն կարող եւ հակառակը: Սակայն Խաչը միաժամանակ լցնում է թե՛ երկիրը եւ թե՛ երկինքը, քանի որ իր վրա կրում է աստվածային անբավ եւ անփոփոխ բնությունը: Քրիստոսապսակ փայտը մյուս տունկերի նման բուսնեց երկրի վրա, սակայն արմատացավ Եկեղեցու մեջ եւ հավատացյալների սրտերում խոր արմատներ ձգելով՝ բարձրացավ վեր բոլոր արարածներից: Խաչը ծաղկեց իսրայելյան ազգի մեջ, քանի որ Քրիստոս ծնվեց Պաղեստինում՝ Բեթղեհեմում, սակայն նրա պտղով լցվեց ողջ տիեզերքը: Մեկնիչը Խաչի պտուղներն է համարում առաքյալներին, հայրապետներին, քահանաներին, վարդապետներին, խաչակիր մենակյացներին, պսակված մարտիրոսներին եւ բոլոր հավատացյալներին, որոնց ճակատը դրոշմված է, եւ որոնք «քրիստոսեանք կոչին պտուղք են քո եւ այսպիսի պտղով լի են տիեզերք»:

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողի վերաբերյալ թե՛ պատմական եւ թե՛ մեկնողական բնագրերի առկայությունը վկայում է Հայ Եկեղեցու աստվածաբանական-դավանաբանական, ծիսական եւ կրթական համակարգում նշյալ երկի ունեցած կարեւոր դերի մասին:

Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ 2023-ի թիվ 2



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գեւորգ Ե Սուրենյանցի ազգանվեր գործունեությունը

Ողբալի դեպքերի մասին խոսել են նաեւ օտարերկրացի ականատեսները. «Մի հայ զինվոր արձակուրդում էր եւ Եփրատի ափերին փնտրում էր իր կնոջն ու երեխաներին: Նման դժբախտների հաճախակի կարելի էր հանդիպել: Ամբողջ մեկ ամիս ականատես էինք Եփրատով հարավ հոսող դիակների՝ հաճախ 2–6 հոգի միմյանց կապած: Տղամարդկանց դիակները հաճախ այլանդակված էին.... իսկ կանանց դիակները բացված փորերով էին» (*Ա. Արզումանյան,* Դարավոր գոյամարտ, Երեւան, 1989, էջ 389): Այս ամենն իրագործվում էր նախապես ծրագրված հաջորդականությամբ եւ դաժանագույն եղանակներով, որոնք երբեւէ չգերազանցվեցին մարդկային պատմության մեջ: Գերմանիայի եւ Ամերիկայի դեսպանների հետ զրույցի ընթացքում, ի պատասխան զրուցակիցների, որոնք ասում էին, թե պետք է գոնե հայ երեխաներին խղճալ, թուրք նախարար Էկրանը պատասխանում է՝ հայ երեխաները պետք է մահանան իրենց ազգի հետ (տե՛ս *Ս. Պողոսյան,* Հայոց ցեղասպանության պատմություն, հտ. 2, էջ 348–349):

Թուրքական յաթաղանից փրկված հայերը սփռվում են աշխարհով մեկ: Մի մասն անցնում է Արեւելյան Հայաստան, որտեղ եւս վիճակը ծանր էր, մյուս մասը՝ եվրոպական երկրներ: Հայոց ցեղասպանությունը, բնականաբար, շղարշել էր պետք: Թուրքական կառավարությունը պետք է փորձեր ամեն կերպ կոծկել նախապես ծրագրված ոճրագործությունը: Թալեաթը, որի ձեռքում կենտրոնացած էր գրեթե ողջ իշխանությունը, հայերի ցեղասպանությունը փորձում է արդարացնել այն հանգամանքով, թե իբր հայերը զինված ապստամբություն են բարձրացրել պատերազմի նախընթացին: Այդ նպատակով 1916 թ. հրավիրվում է երիտթուրքերի համագումարը, որի հիմնական նպատակը աշխարհին համոզելն էր՝ իբր հայերը փորձել են այլ ազգերի հետ միասին պայքարել թուրքական կայսրության դեմ եւ մասնատելով օսմանյան տերությունը՝ անկախ Հայաստան ստեղծել այդ տարածքում: Թուրքական եւ օտարալեզու մամուլի միջոցով շրջանառության մեջ է դրվում այս ստահոդ ու կեղծ դրույթը (տե՛ս *Շահան Նաթալի,* Թուրքերը եւ մենք, Երեւան, 1992, էջ 32–35): Լույս էին տեսնում քարտեզներ, որոնք իբրեւ թե հայերի ստեղծածն էին. հայկական տարածքներն իբր առանձնացված էին, ինչը թուրքական կառավարությունն ազգային քարոզչության միջոց էր համարում: Ահա այսպիսի ճղճիմ եւ անհեթեթ պատճառաբանություններով էին փորձում արդարացնել մի ամբողջ ազգի կոտորածը սեփական պատմական հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում:

Արեւելյան Հայաստան հասած՝ եղեռնից մազապուրծ հայերն այստեղ եւս դժվարություններ ունեցան: Գաղթականներին աջակցելու, չքավորներին կերակրելու, հիվանդներին խնամելու եւ բուժելու նպատակով Գեւորգ Ե Սուրենյանցը հայրապետական կոնդակով հորդորում է եղբայրական օգնության հանձնաժողովին նվիրաբերություններով օգնել արեւմտահայ գաղթականությանը (տե՛ս «Արարատ», թիվ 2–3, էջ 99–100): Հայոց հայրապետը մեկ այլ կոնդակով դիմում է եկեղեցական ու հասարակական գործիչներին եւ կոչ անում աջակցել անմխիթար վիճակում հայտնված արեւմտահայությանը (տե՛ս «Արարատ», թիվ 2–3, էջ 101–103):

Գաղթականներին խնամելու եւ կերակրելու աշխատանքները կազմակերպելու, կանոնավորելու համար հունվարի 24-ին Հայոց հայրապետի կարգադրությամբ Ս. Էջմիածնում հրավիրվում է եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նիստ, որին մասնակցում էին Երեւանի թեմական հանձնաժողովի ներկայացուցիչները («Արարատ», թիվ 4–5, էջ 313–316): Այս ամենից բացի՝ անդրադառնալով իր ժողովրդին բաժին հասած դառնություններին՝ Գեւորգ Ե Սուրենյանցը հատուկ կոնդակով (1916 թ. մարտի 22) հորդորում է համայն հայությանը վերաշինել հայրենիքը՝ կառուցել եկեղեցիներ, բացել դպրոցներ, որբանոցներ, ծերանոցներ ու հիվանդանոցներ («Արարատ», 1916, թիվ 3–4, էջ 166–170): 1916 թ. հուլիսի 23-ին Հայոց կաթողիկոսը Փարիզում գտնվող Պողոս Նուբարից ստանում է հեռագիր, որով վերջինս հայտնում է, թե հայության բարեկամներից՝ խորհրդարանի ականավոր անդամներից կազմվել է մի հանձնաժողով, որի նպատակը Հայ դատի պաշտպանությունն է («Արարատ», 1916, թիվ 7–8, էջ 534–535):

Գեւորգ Ե Սուրենյանցի ուշադրության կենտրոնում են եղել նաեւ արեւմտահայ գաղթականների կորած զավակներին գտնելու, որբանոցներ ու դպրոցներ բացելու, որբացած երեխաների կարիքները հոգալու խնդիրները: Այդ մասին են վկայում Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի՝ Հայոց հայրապետին ուղղած հայտարարությունները («Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Գ, էջ 124–125, 130, 133): Միայն 1916 թ. Ալեքսանդրապոլում գործում էր մի քանի որբանոց, որ պահվում էին Եղբայրական օգնության (տե՛ս անդ, էջ 124), երիտասարդական միության, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի եւ բարեգործական ընկերության միջոցներով (տե՛ս անդ, էջ 125): Գեւորգ Ե Սուրենյանցի կարգադրությամբ Ալեքսանդրապոլում հիմնադրվում է աշխատանքի տուն՝ «Տարօն» անունով, որտեղ աշխատում էին արեւմտահայ կանայք ու աղջիկներ: Նպատակը կանանց հնարավորություն տալն էր աշխատելու եւ վարձատրվելու, զգեստներ կարելու եւ գաղթականներին բաժանելու՝ եղբայրական օգնության կոմիտեի միջոցներով (տե՛ս անդ, էջ 137):

1918 թ. հունվարի 10-ին հրապարակվում է Գեւորգ Ե Սուրենյանցի՝ համայն հայությանն ուղղած կոնդակը՝ կապված կովկասյան շրջանի հանձնակատար խորհրդի տնօրինության՝ Հայ Եկեղեցու անշարժ եւ շարժական գույքի, կալվածքների ու դրանցից ստացվող հասույթների բռնագրավման հետ: Նա մատնանշում է, թե ազգային ինչ նպատակների է ծառայում Հայ Առաքելական Եկեղեցու ունեցվածքը: Կոնդակում մասնավորապես ասվում է. «....հիմն Եկեղեցւոյս մերոյ, հասք եւ եկամուտ սեփականութեանցդ այդոցիկ ի կրթութիւն եւ ի դաստիարակութիւն մանկանց Ս. Եկեղեցւոյս գնան. յայդ աղբիւր մշտական կան կապեալք դպրոցք Մեր ի ստորին ծխականաց ցդպրանոցս եւ ցճեմարան Մեր հոգեւոր, ընդ հովանեաւ որոյ կրթեցան եւ կրթին մանկունք Մեր՝ եթէ ի գաւառաց Կովկասեան շրջանի, եթէ ի հեռաւոր վայրից Եւրոպիոյ, Ասիոյ եւ Ամերիկայի, առանց խտրութեան իւիք: Ի հասիցդ են մատակարարութիւնք այլ եւ այլ հաստատութեանց կրթականի եւ լուսաւորութեան ազգիս, պահպանութիւն տպարանի Մայր Աթոռոյս, թանգարանի եւ ճոխագոյն մատենադարանի նորին, յոր որպէս առ ճրագ լուսատու ոչ սակաւք են, որ գան յուսումնասիրութիւն ի գիտնոց» («Արարատ», 1918, թիվ 1–3, էջ 6):

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ հայ հոգեւորականությունն անմասն չմնացին նաեւ Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերին, ուր վճռվում էր հայոց պետականության հարցը: Նրանք անմիջական մասնակցություն էին բերում բուն մարտական գործողություններին: Հայոց բանակին ծառայելու պատրաստակամություն են ցուցաբերում Ս. Էջմիածնի բազմաթիվ հոգեւորականներ: Այդ ծանրագույն օրերին Գեւորգ Ե Սուրենյանցը վճռում է չլքել Մայր Աթոռը: Հայտնի է, որ դեպի Կոտայք եւ Սեւան նահանջի ծրագրի ժամանակ Գեւորգ Ե հայրապետին առաջարկում են մեկնել Սեւան: Առաջին անգամ՝ մայիսի 20-ին, նրան այս առաջարկով դիմում է գեներալ Մ. Սիլիկյանը, իսկ երկրորդ անգամ՝ Ա. Մանուկյանը եւ Ա. Շահխաթունին՝ մայիսի 21-ին: Սակայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկու դեպքում էլ կտրուկ մերժում է: Ավելին՝ Ա. Մանուկյանին եւ Ա. Շահխաթունուն ասում է, որ եթե հայոց զորքն ու ժողովուրդն ի վիճակի չեն պաշտպանելու մեր սրբությունները, ապա ինքը միայնակ սուր կվերցնի ու կընկնի Մայր տաճարի գավթում, բայց չի հեռանա մեր պապերից ավանդ մնացած Մայր Աթոռից (տե՛ս *Հ. Թուրշյան,* Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակը, Ս. Էջմիածին, 1968, էջ 22): Մայիսի 24-ին զորավար Մ. Սիլիկյանը հեռագրով հաղորդում է Ա. Մանուկյանին. «Եղա այս րոպեիս Կաթողիկոսի մոտ, որն ինձ օրհնեց եւ հաստատապես որոշեց մնալ Էջմիածնում.... Արեւածագին անցնում եմ հարձակողականի: Աստված մեզ հետ է» («Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Ե, էջ 63): Հ. Թուրշյանն իրավացիորեն նշում է. «Այդ օրերին Մայր Աթոռը, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու միաբանությունը, հավատարիմ Հայ Եկեղեցու հայրենասիրական դարավոր ոգուն, միասնական ու աննահանջ դուրս էին եկել հասարակաց թշնամու դեմ՝ հանուն հայրենյաց եւ ազգի» (նշվ. աշխ., էջ 23):

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությամբ եւ Մուդրոսի զինադադարի կնքմամբ (1918 թ. հոկտեմբերի 30) նպաստավոր իրավիճակ է ստեղծվում Հայկական հարցի դրական լուծման համար: Կրկին բարձրացվում է միացյալ եւ անկախ Հայաստանի ստեղծման ու հռչակման հարցը: Նույն թվականի մայիսի 28-ին հռչակվում է Հայաստանի առաջին Հանրապետությունը, որը, սակայն, գոյատեւում է ընդամենը երկու տարի: Հայոց Հայրապետի՝ 1920 թ. հունվարի 24-ին Ա. Խատիսյանին հասցեագրած հուզումնալից նամակում գրված է. «Աղօթում եմ Բարձրելոյն, որ արժանացնի տեսնելու Մասիսի գլխին հայկական դրօշակի ծածանումն ու միացեալ մեծ Հայաստանի Հանրապետութիւնը....» («Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Ե, էջ 19): «Վշտալի կաթողիկոսի»՝ հայոց պետականության վերականգնման հետ կապված հույսերն այդպես էլ չեն իրականանում:

Հայ ժողովրդի պատմության մի նոր ու դժվարին փուլ՝ խորհրդայնացման գործընթացն է սկսվում. ձեւավորվում է համայնավարական կառավարություն: Ճիշտ է՝ դաշնակցականները փորձում են վերականգնել իրենց իշխանությունը, սակայն ապարդյուն: Գեւորգ Ե Սուրենյանցը հստակ գիտակցում է, որ խորհրդայնացումն անխուսափելի է, ուստի 1921 թ. հոկտեմբերի 31-ին հայրապետական կոնդակով դիմում է համայն հայությանը՝ համախմբվելու նորակազմ պետության շուրջը (*Ա. Արզումանյան,* Դարավոր գոյամարտ, Երեւան, 1989, էջ 271): Այս կոնդակով Հայոց հայրապետն իր խոր ցավն է հայտնում համայն հայությանը ստեղված ծանր եւ ողբերգական իրավիճակի համար: Այս աղետալի պայմաններից ելնելով՝ Գեւորգ Ե Սուրենյանցը պետք է կարողանար շահել նոր կառավարության բարյացակամ վերաբերմունքը՝ ուղղված հայ ժողովրդին եւ Հայ Եկեղեցուն: Սա էր Հայոց կաթողիկոսի՝ ռուս հեղափոխության տասներորդ տարեդարձին՝ 1927-ին գրած կոնդակի միտումը, որով նա պատրաստակամություն էր հայտնում հայրենաշեն ձեռնակներում աջակցելու կառավարությանը:

Շարունակելի

Մարիամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ



Սկիզբը՝ 2022-ի թիվ 19 – 2023-ի թիվ 1–2

Նամակ քսաներկուերորդ
ՍԻՐԵՔ ԸՆԹԵՐՑԵԼ

Յուրաքանչյուր մարդ պարտավոր է (ընդգծում եմ՝ պարտավոր է) հոգալ իր մտավոր զարգացման մասին: Դա նրա պարտքն է հասարակության առջեւ, որում ապրում է, եւ իր անձի հանդեպ:

Մտավոր զարգացման հիմնական (բայց, իհարկե, ոչ միակ) ճանապարհն ընթերցանությունն է:

Ընթերցանությունը չպետք է պատահական լինի: Այն ժամանակի հսկայական ծախս է, իսկ ժամանակն ամենամեծ արժեքն է, որը չի կարելի վատնել դատարկ բաների վրա: Անհրաժեշտ է ընթերցել ծրագրով՝ իհարկե խստորեն չհետեւելով դրան, հեռանալով դրանից այնտեղ, որտեղ ընթերցողի համար ի հայտ են գալիս լրացուցիչ հետաքրքրություններ: Սակայն նախնական ծրագրից բոլոր շեղումների դեպքում անհրաժեշտ է նորը կազմել՝ հաշվի առնող ի հայտ եկած նոր հետաքրքրությունները:

Որպեսզի ընթերցանությունն արդյունավետ լինի, պետք է հետաքրքրի ընթերցողին: Սեփական անձի մեջ պետք է զարգացնել հետաքրքրություն ընթերցանության հանդեպ առհասարակ կամ մշակույթի որոշակի բնագավառների նկատմամբ: Հետաքրքրությունը կարող է մեծավ մասամբ լինել ինքնադաստիարակման արդյունք:

Ինքդ քեզ համար ընթերցանության ծրագրեր կազմելն այնքան էլ հեշտ չէ, եւ դա անհրաժեշտ է անել բանիմաց մարդկանց հետ խորհրդակցելով, առկա տարբեր տեսակի տեղեկատու ձեռնարկների օգնությամբ:

Ընթերցանության վտանգը սեփական անձի մեջ շարադրանքի «անկյունագծային» դիտման կամ տարբեր տեսակի արագ ընթերցանության մեթոդներին հակման զարգացումն է (գիտակցաբար կամ անգիտակիցաբար):

«Արագ ընթերցանությունը» ստեղծում է գիտելիքի խաբուսիկություն: Դա կարելի է թույլատրել միայն որոշ տեսակի մասնագիտություններում՝ զգուշանալով արագ ընթերցանության սովորության ձեւավորումից. դա հանգեցնում է ուշադրության հիվանդության:

Նկատե՞լ եք, թե ինչպիսի մեծ տպավորություն են թողնում գրական այն ստեղծագործությունները, որոնք ընթերցվում են խաղաղ, անշտապ ու հանգիստ պայմաններում, օրինակ՝ հանգստի կամ ոչ այնքան բարդ եւ ոչ շեղող հիվանդության ժամանակ:

Գրականությունը մեզ տալիս է կյանքի վիթխարի, լայնածավալ եւ խորունկ փորձառություն: Այն մարդուն դարձնում է կիրթ, նրա մեջ զարգացնում է ոչ միայն գեղեցկության զգացումը, այլ նաեւ ընկալումը՝ կյանքի ընկալումը՝ դրա բոլոր բարդությունների, ուղեցույց է ծառայում դեպի այլ դարաշրջաններ եւ առ այլ ժողովուրդներ, բացում է ձեր առջեւ մարդկանց սրտերը: Մի խոսքով՝ ձեզ իմաստուն է դարձնում: Բայց այս ամենը տրվում է միայն այն ժամանակ, երբ դուք ընթերցում եք՝ խորամուխ լինելով բոլոր մանրուքների մեջ: Քանզի ամենագլխավորը հաճախ թաքնված է լինում հենց մանրուքներում: Իսկ այդպիսի ընթերցանությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կարդում եք հաճույքով, ոչ թե այն պատճառով, որ այս կամ այն ստեղծագործությունը պետք է ընթերցել (լինի դպրոցական ծրագրով կամ նորաձեւության եւ սնափառության թելադրանքով), այլ որովհետեւ դա ձեզ դուր է գալիս. զգացել եք, որ հեղինակն ասելիք ունի, ձեզ փոխանցելու բան կա, եւ նա կարողանում է դա անել: Եթե ստեղծագործությունն առաջին անգամ անուշադիր եք ընթերցել, ապա կրկին կարդացեք, երրորդ անգամ կարդացեք: Մարդը պետք է ունենա սիրելի ստեղծագործություններ, որոնց անդրադառնում է բազմիցս, որոնք մանրամասնություններով գիտի, որոնց մասին պատեհ իրավիճակում կարող է հիշեցնել շրջապատողներին եւ դրանով մերթ բարձրացնել տրամադրությունը, մերթ լիցքաթափել իրադրությունը (երբ միմյանց հանդեպ դժգոհություն է կուտակվում), մերթ ծիծաղեցնել, մերթ պարզապես արտահայտել սեփական վերաբերմունքը ձեր կամ ինչ-որ մեկի հետ պատահածի վերաբերյալ: Դպրոցում ինձ «անշահախնդիր» ընթերցանություն սովորեցրել է գրականության ուսուցիչս: Ես սովորում էի այն տարիներին, երբ ուսուցիչները հաճախ էին ստիպված լինում դասերից բացակայել. երբեմն խրամատներ էին փորում Լենինգրադի մերձակայքում, երբեմն պետք է օգնեին ինչ-որ գործարանի, երբեմն պարզապես հիվանդ էին: Լեոնիդ Վլադիմիրովիչը (այդպես էին կոչում իմ գրականության ուսուցչին) հաճախ էր դասարան գալիս, երբ մյուս ուսուցիչը բացակայում էր, անկաշկանդ նստում էր ուսուցչական սեղանի մոտ եւ պայուսակից հանելով գրքերը՝ առաջարկում էր մեզ ինչ-որ բան ընթերցել: Մենք արդեն գիտեինք, թե նա ինչպես էր կարողանում կարդալ, ինչպես էր կարողանում բացատրել ընթերցածը, ծիծաղել մեզ հետ, հիանալ ինչ-որ բանով, զարմանալ գրողի արվեստով եւ ուրախանալ գալիքի համար: Այսպես մենք լսեցինք բազում հատվածներ «Պատերազմ եւ խաղաղություն»ից», «Կապիտանի աղջկանից», մի քանի պատմվածքներ Մոպասանից, Սոլովեյ Բուդիմիրովիչի մասին բիլինան, այլ բիլինա՝ Դոբրինյա Նիկիտիչի վերաբերյալ, Վիշտ-չարաբախտության մասին պատմությունը, Կռիլովի առակները, Դերժավինի ներբողները եւ շատ ու շատ այլ ստեղծագործություններ: Ես մինչեւ այժմ սիրում եմ այն, ինչ լսել եմ մանկությանս ժամանակ: Իսկ տանը հայրս ու մայրս սիրում էին երեկոյան ընթերցել: Կարդում էին իրենց համար, իսկ որոշ դուր եկած հատվածներ ընթերցում էին նաեւ մեզ համար: Կարդում էին Լեսկով, Մամին-Սիբիրյակ, պատմական վեպեր, այն ամենը, ինչ իրենց դուր էր գալիս, եւ որն աստիճանաբար սկսում էր նաեւ մեզ դուր գալ:

«Անշահագրգիռ», բայց հետաքրքիր ընթերցանությունը հենց այն է, ինչն ստիպում է սիրել գրականությունը եւ ընդլայնում է մարդու մտահորիզոնը:

Կարողացեք ընթերցել ոչ միայն դպրոցական պատասխանների համար եւ ոչ էլ այն պատճառով, որ այս կամ այն ստեղծագործությունը կարդում են բոլորը, քանի որ նորաձեւ է: Կարողացեք ընթերցել հետաքրքրությամբ եւ առանց շտապելու:

Ինչո՞ւ է այժմ հեռուստացույցը մասամբ դուրս մղում գրքին: Այո՛, այն պատճառով, որ հեռուստացույցն ստիպում է ձեզ առանց շտապելու դիտել ինչ-որ հաղորդում, հարմար նստել, որպեսզի ձեզ որեւէ բան չխանգարի, այն ձեզ շեղում է հոգսերից, թելադրում է՝ ինչպես դիտել եւ ինչ դիտել: Բայց փորձեք ձեր ճաշակով գիրք ընտրել, ժամանակավորապես վերացեք աշխարհում ամեն ինչից նույնպես, հարմարավետ նստեք գրքով եւ կհասկանաք, որ կան բազմաթիվ գրքեր, առանց որոնց չի կարելի ապրել, որոնք ավելի կարեւոր ու հետաքրքիր են, քան բազմաթիվ հաղորդումներ: Ես չեմ ասում՝ դադարեք հեռուստացույց դիտելուց: Սակայն ասում եմ՝ նայեք ընտրությամբ: Ձեր ժամանակը ծախսեք մի բանի վրա, որն արժանի է այդ ծախսին: Ընթերցեք շատ եւ ընթերցեք մեծագույն ընտրողությամբ: Ինքներդ որոշեք ձեր ընտրությունը՝ նկատի ունենալով, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերել ձեր ընտրած գիրքը մարդկային մշակույթի պատմության մեջ, որպեսզի դառնա դասական: Սա նշանակում է, որ դրա մեջ ինչ-որ էական բան կա: Իսկ միգուցե մարդկության մշակույթի համար այդ էականը, պարզվի, էական է նաեւ ձեզ համար:

Դասական ստեղծագործությունն այն է, որը դիմացել է ժամանակի փորձությանը: Դրա հետ դուք չեք կորցնի ձեր ժամանակը: Սակայն դասական գործերը չեն կարող պատասխանել այսօրվա բոլոր հարցերին: Ուստի անհրաժեշտ է կարդալ նաեւ ժամանակակից գրականություն: Միայն մի՛ հարձակվեք յուրաքանչյուր նորաձեւ գրքի վրա: Մի՛ եղեք ճղճիմ: Ճղճիմությունն ստիպում է մարդուն անխոհեմորեն ծախսել իր ունեցած ամենամեծ եւ ամենաարժեքավոր հարստությունը, որը տնօրինում է՝ սեփական ժամանակը:

Հիշո՞ւմ եք, թե ինչ է գրել Պուշկինը Քիշնեւից իր եղբորն ու քրոջը՝ Օլգային, 1822 թվականի հուլիսի 31-ին. «Ընթերցանությունն է լավագույն ուսումը»: Նայեք «Պուշկինի լեզվի բառարան»-ում (Մոսկվա, 1957) «գիրք» եւ «ընթերցանություն» բառերը: Որքան շատ է Պուշկինը գրում ընթերցանության, գրքի հետ իր սիրելի հերոսների շփման մասին:

Նամակ քսաներեքերորդ
ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարող են ասել՝ ահա գրքերը չեն հասնում նրանց, ովքեր դրանց կարիքն ունեն: Երբեմն ծառայում են որպես զարդարանք. ձեռք են բերվում գեղեցիկ կազմերի համար եւ այլն: Բայց դա այնքան էլ սարսափելի չէ: Գիրքը միշտ կգտնի նրան, ում պետք է: Օրինակ՝ գիրք է գնում մեկը, որը դրանով զարդարում է իր ճաշասենյակը: Բայց չէ որ նա կարող է ունենալ եւ որդի, եւ եղբորորդիներ: Մենք հիշում ենք, թե ինչպես են մարդիկ սկսել հետաքրքրվել գրականությամբ՝ գրադարանների միջոցով, որոնք գտել են իրենց հոր կամ իրենց հարազատների տանը: Այնպես որ գիրքը մի օր կգտնի իր ընթերցողին: Այն կարող է վաճառվել. դա նույնպես վատ չէ, գրքերի ինչ-որ պաշար կլինի, հետո այն դարձյալ կգտնի իր ընթերցողին:

Ինչ վերաբերում է անձնական գրադարանին, ապա, կարծում եմ, այս հարցին պետք է խիստ պատասխանատվությամբ մոտենալ. ոչ միայն այն պատճառով, որ անձնական գրադարանը համարում են տիրոջ այցեքարտը, այլ որ այն որոշ դեպքերում դառնում է հեղինակության հանգամանք: Եթե մարդը գրքեր է գնում միայն հեղինակության համար, ուրեմն իզուր է դա անում: Առաջին իսկ զրույցի ժամանակ նա կմատնի իրեն: Պարզ կդառնա, որ նա գրքեր չի կարդացել, իսկ եթե ընթերցել է, ապա չի հասկացել:

Անհրաժեշտ չէ անձնական գրադարանը չափազանց մեծացնել, պետք չէ այն լցնել «մեկանգամյա ընթերցանության» գրքերով: Այդպիսի գրքերն անհրաժեշտ է վերցնել գրադարանից: Տանը պետք է լինեն վերընթերցման գրքերը՝ դասականները (ընդ որում՝ սիրելիները), իսկ ամենից շատ՝ տեղեկատուները, բառարանները, մատենագիտությունները: Դրանք երբեմն կարող են փոխարինել մի ամբողջ գրադարանի: Անպայման մատենագիտություն վարեք ըստ ձեր մասնագիտության եւ այդ մատենագիտության քարտերի վրա նշեք, թե այդ գրքում ինչն է ձեզ թվում կարեւոր ու պետքական:

Կրկնում եմ. եթե գիրքը ձեզ անհրաժեշտ է միանգամյա ընթերցանության համար, այն պետք չէ ձեռք բերել: Իսկ անձնական գրադարան կազմելու արվեստը նման գրքեր ձեռք բերելուց զերծ մնալն է:

Նամակ քսանչորսերորդ
ԼԻՆԵՆՔ ԵՐՋԱՆԻԿ

(պատասխան դպրոցականի նամակին)

Սիրելի՛ Սերյոժա, դու միանգամայն ճիշտ ես՝ սիրելով հին շենքերը, հին իրերը՝ այն ամենը, ինչ ուղեկցում էր մարդուն անցյալում եւ ուղեկցում է նրան այժմյան կյանքում: Այս ամենը ոչ միայն պարզապես մտել է մարդու գիտակցության մեջ, այլ ինքն ասես ինչ-որ բան ընդունել է մարդկանցից: Թվում է՝ իրերը նյութական են, բայց դրանք դարձել են մեր հոգեւոր մշակույթի մի մասը, միաձուլվել են մեր ներաշխարհին, որը պայմանականորեն կարելի է անվանել «հոգի»: Չէ՞ որ մենք ասում ենք՝ «ամբողջ հոգով», կամ՝ «դա ինձ անհրաժեշտ է հոգու համար», կամ՝ «պատրաստված է հոգով»: Ահա՛ այդպես: Այն ամենը, ինչ արված է հոգով, բխում է հոգուց, մեզ անհրաժեշտ է հոգու համար. այդ իսկ է «հոգեւոր մշակույթը»: Որքան մարդը շրջապատված է այդ հոգեւոր մշակույթով, խորասուզված է դրա մեջ, այնքան երջանիկ է, այնքան նրա համար հետաքրքիր է ապրելը, կյանքը նրա համար ձեռք է բերում բովանդակալիություն: Իսկ աշխատանքի, ուսման, ընկերների ու ծանոթների, երաժշտության, արվեստի նկատմամբ զուտ ձեւական վերաբերմունքի մեջ չկա այդ «հոգեւոր մշակույթը»: Այդ իսկ է «անհոգեւորությունը»՝ սարքի կյանքը՝ որեւէ բան չզգացող, անկարող սիրելու, ինքնազոհաբերվելու, բարոյական եւ գեղագիտական կատարելատիպեր ունենալու:

Եկեք երջանիկ մարդիկ լինենք, այսինքն՝ կապվածություններ ունեցող, ինչ-որ նշանակալի բան խորապես ու լրջորեն սիրող, հանուն սիրելի գործի եւ սիրելի մարդկանց ինքնազոհաբերվել կարողացող: Այդ ամենը չունեցող մարդիկ դժբախտ են՝ ձանձրալի կյանքով ապրող, իրենց՝ սին ձեռքբերումների կամ մանր, ստոր, «արագ փչացող» հաճույքների մեջ տարրալուծող:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՁԵԿՅԱՆԻ



Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23, 2023-ի թիվ 2

Ա. Եկեղեցական-ծխական դպրոցներ

Ծխական դպրոցները ստեղծվել են ԺԹ դարի 50–60-ական թվականներին, հայտնի էին նաեւ ծխական-եկեղեցական անվամբ, քանզի կից էին եկեղեցիներին. «Ծխական կամ սկզբնական կոչին այնքիկ եկեղեցական դպրոցաց, որք գտանին առ իւրաքանչիւր եկեղեցեաւ» («Արարատ», 1868, թիւ 6, էջ 70): Ծխական դպրոցները (միդասյա եւ երկդասյա) պահվում էին եկեղեցական միջոցներով, սաների վճարումներով եւ ժողովրդի նվիրատվություններով (տես *Լ. Սարգսեան*, ժողովրդի կրթութեան գործը մեզանում, Մոսկուա, 1892, էջ 20): Քննվող ժամանակաշրջանում գործում էին արական, իգական եւ խառը դպրոցներ: 1860-ական թվականներին Ռուսական կայսրությունում կատարված բարեփոխումները, հասարակական-քաղաքական զարգացումները մեծ աշխուժություն են առաջացնում ուսումնակրթական բնագավառում:

1867 թ. հունիսի 14-ին Ս. Էջմիածնում Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին (1866–1882 թթ.) «Էջմիածնի կարող միաբաններէն ուսումնական հանձնաժողով մը կազմեց» (*Մ. արք. Օրմանեան*, Ազգապատում, հտ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4874), որի պարտականություններն էին ուսումնարանների բոլոր խնդիրները հոգալը եւ հայոց եկեղեցական դպրոցների համար ընդհանուր կանոնադրություն մշակելը: Ստեղծված հանձնաժողովի անդամները գործի նորության պատճառով չեն կարողանում այն գլուխ բերել. Հայոց հայրապետը ստիպված վերակազմում է ուսումնական հանձնախումբը (տես անդ, հտ. Գ, էջ 4874): Այս մասին որոշ տեղեկություններ է հաղորդում «Արարատ» ամսագիրը (տես 1868-ի թիվ 6 համարը): Թեմերից եւ հոգեւոր ղեկավարությունից անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո հանձնաժողովի անդամները կազմում են նոր կանոնադրություն: Նոր կանոնների ընդունումը հրատապ էր, քանզի հայ դպրոցը «գոյատեւում» էր առանց կանոնադրության, ինչն էլ իր հերթին ցարական իշխանություններին թույլ էր տալիս միջամտել կրթական համակարգի կազմակերպմանը: 1868 թ. հրապարակվում է ծխական դպրոցների կանոնադրությունը: Կանոնադրության համաձայն՝ դպրոցները բաժանվում են երեք կարգի՝ ծխական, վանական եւ թեմական. այս դպրոցների համար մշակվում է առանձին կանոնադրություն: Ուսումնական հանձնաժողովը թեմական դպրոցների համար միասնական կանոնադրություն մշակելու հետ միաժամանակ հրատարակում է նաեւ «Կանոն յաղագս ծխական հոգեւոր դպրոցացն հայոց որ ի Ռուսաստան». համաձայն այս կանոնադրության՝ «Ամենայն եկեղեցիք, որ ի քաղաքս եւ ի գիւղօրէս, պարտին ունել ի սրահի իւրեանց զմի ծխական դպրոց» (*Ս. Բէիբուդեան*, Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստէճեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, գիրք ԺԱ, Երեւան, 2004): Կանոնադրությունը հաստատում էր, որ ծխական դպրոցները պետք է կառավարվեին ժողովրդի ընտրած հոգաբարձուների միջոցով, այսինքն՝ հոգաբարձուները լինելու էին դպրոցի իրավական տերը, քանի որ նրանցից էր կախված ուսուցիչների ընտրության, նյութական միջոցների տնօրինության եւ զանազան այլ հարցեր: Սահմանվում էին նաեւ ծխական դպրոցներում ավանդվող առարկաները՝ կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, վայելչագրություն, երգ, թվաբանություն, իսկ իգական ծխական դպրոցներում՝ նաեւ ձեռագործ: 1860-ական թվականների վերջերին հիմնադրված Երնջակի Ս. Կարապետ վանքի հոգեւոր-ծխական դպրոցում ուսուցանում էին կրոն, հայոց, ռուսաց եւ պարսից լեզուներ, թվաբանություն, երգ եւ վայելչագրություն (տես *Ս. Խուդոյան*, նշվ. աշխ., էջ 204): Սովորում էին 7–11 տարեկան երեխաները (եւ աղջիկներ, եւ տղաներ): Ուսուցումը տեւում էր 2–3 տարի. հնարավորության, նյութական միջոցների առկայության դեպքում կրթության տեւողությունն ավելանում էր 1–2 տարով (տես *Վ. Երկանյան*, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 45–46): Կանոնադրության համաձայն՝ ուսումնառությունը պետք է տեւեր ամբողջ տարին՝ առանց արձակուրդի: Այս ամենով հանդերձ՝ նոր մշակված կանոնները թերի էին, քանի որ անորոշ վիճակում էր թողնված նյութական միջոցների հարցը, դասաժամերի տեւողության, ուսուցիչների իրավունքների, ուսումնական ծրագրերի հետ կապված զանազան բացթողումներ էին առկա: Եվ, որ ամենակարեւորն է, պարզ չէր, թե տարրական դպրոցն ինչով պետք է տարբերվեր բարձր աստիճանի դպրոցից:

Ծխական դպրոցները, բացի թեմական դպրոցի համար թեկնածուներ պատրաստելուց, հասարակության լայն խավերի տարրական կրթությունն ապահովելուց, իրենց գոյությամբ պայմանավորում էին բազմաթիվ կրթական, բարեգործական եւ մշակութային հիմնարկությունների գործունեությունը: Անկախ թերություններից՝ 1868 թ. դպրոցական կանոններն առաջին անգամ փորձում էին կանոնակարգել արեւելահայ կրթական գործը, պարզել ուսումնական հաստատությունների ենթակայության հարցը եւ այն հանձնել հոգաբարձուներին:

Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին լավ էր հասկանում լուսավորության կարեւորությունը եւ հաջողությունը միայն դպրոցների բարեկարգության մեջ էր տեսնում: Վարժարաններ բացելը եղավ Հայոց հայրապետի ամենօրյա մտահոգության առարկան: 1836 թ. Պոլոժենիեն թույլ էր տալիս յուրաքանչյուր եկեղեցուն կից ունենալ ծխական եւ հոգեւոր վարժարան. Գեւորգ Դ կաթողիկոսին հաջողվում է հայկական բազմաթիվ



դպրոցներ բացել: Այս առնչությամբ «Հայկական աշխարհ» օրագրի խմբագիր Ստեփանոս Ստեփանեն իր մի ուղերձում գրում է. «Ուսումնարաններ, ուսումնարաններ եւ միշտ ուսումնարաններ» փրկարար ձայնը հասնում է անդադար հայերի ականջին» (*Մ. Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 86): Դեռեւս 1867 թ. մայիսի 25-ին գրված իր առաջին կոնդակում Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին եպիսկոպոսներին հանձնարարում էր իրենց թեմերում դպրոցներ, վարժարաններ բացել (*Ս. Բէիբուդեան*, նշվ. աշխ., էջ 103): Հայկական դպրոցներ բացելը ժամանակի պահանջ եւ օրակարգի հարց էր դարձել. համայնքի հարուստ ծխականները ձեռնարկում էին ուսումնական շենքերի կառուցումը: Մի անգամ Նոր Նախիջեւանի Նիսուիթա գյուղի պատգամավորները ներկայանում են Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցուն եւ հայտնում, որ իրենց գյուղացիները եկեղեցու հիմն են կառուցում. Հայոց կաթողիկոսը հարցնում է՝ դպրոց ունե՞ն: Երբ նրանք պատասխանում են, որ չունեն, հայրապետը կարգադրում է նախ դպրոց կառուցել, ապա՝ եկեղեցի (տես *Մ. Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 88):

1886 թ. հուլիսին հրատարակվում է «Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց» ժողովածուն, իսկ «1886 թ. սեպտեմբերէ վարժարաններն սկսան կանոնաւոր ընթացք վարել» (*Մ. արք. Օրմանեան*, նշվ. աշխ., էջ 5252): Նոր կանոնները մշակված էին 1884 թ. կանոնների պահանջներով: «Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց»-ը բաղկացած էր յոթ գլխից (ա. Հանրական կանոնք, բ. Յաղագս առաջնորդաց, գ. Յաղագս հոգաբարձուաց, դ. Յաղագս ուսուցչաց, ե. Յաղագս մանկավարժական խորհրդոյ, զ. Յաղագս աշակերտաց եւ աշակերտուհեաց, է. Յաղագս ուսման): «Հանրական կանոնք» գլխում ասվում էր.

ա. «Եկեղեցական-ծխական ուսումնարանք Հայոց կարգեալ են առ եկեղեցեօք եւ վանօրէիւք ի քաղաքս եւ ի գեղս ի տալ մանկանց Հայոց երկուց սեռից զհոգեւոր կրթութիւն եւ զսկզբունս կարեւոր գիտելեաց:

բ. Եկեղեցական-ծխական ուսումնարանք բացեալ լինին հրամանաւ Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց եւ կառավարին ընդ ձեռն թեմական առաջնորդաց՝ համաձայն սոյն կանոնադրութեան եւ առանձին հրահանգօք Նորին Վեհափառութեան:

գ. Եկեղեցական-ծխական ուսումնարանք բաժանին յերկուս կարգս՝ Միդասեան (ոչ պակաս քան զերիս ամս) եւ Երկդասեան (ամս հինգ):

դ. Ուսուցիչք եկեղեցական-ծխական ուսումնարանաց, եթէ վիճակահանութեամբ պարտաւորեսցին գնալ ի զինուորութիւն, ազատք են յիսկական զինուորական ծառայութենէ. իսկ եթէ գտցին ի պաշտաման ուսուցչութեան.... ազատին ի զինուորական հարկէն» («Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց», Վաղարշապատ, 1889, էջ 1–3):

«Յաղագս առաջնորդաց» գլխում ասվում էր, որ վիճակների առաջնորդները, կաթողիկոսի թույլտվությամբ, իրենց վիճակներում կարող են եկեղեցական-ծխական դպրոցներ բացել, որոնք պահվելու էին Եկեղեցու միջոցներով, կամավոր նվիրատվություններով, աշակերտների վճարումներով: Բայց, ինչպես տեսնում ենք, ժողովրդական նմանօրինակ աջակցությունների հանդեպ մեծ վստահություն չկար. Լեոն գրում է. «....առհասարակ չէր կարելի առանձին յոյս դնել ժողովրդի աջակցութեան վրայ հէնց այն պատճառով, որ գրագիտութեան եւ ազգային դաստիարակութեան պահանջը հետզհետէ ծաւալւում էր, եւ թեմի զանազան կողմերում տեղական միջոցներով բացւում էին եկեղեցական-ծխական դպրոցներ» (*Լէօ*, Պատմութիւն Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1837–1912), էջ 13): Ս. Խուդոյանը գրում է, որ Ալեքսանդրապոլի Ս. Լուսավորիչ եկեղեցու հոգաբարձությունը դիմել է Հայոց կաթողիկոսին, որ իրենց քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու մոմավաճառությունից ստացված գումարը հատկացվի Ս. Լուսավորիչ եկեղեցու ծխական դպրոցին: Այդ դիմումում նշվում էր, որ անցյալ տարիներին այդ արդյունքներից օգտվել է Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցը (տես *Ս. Խուդոյան*, նշվ. աշխ., էջ 20): «Արարատ» ամսագրի 1873 թ. օգոստոսյան համարում Վ. Բաստամյանը գրում է, որ Ալեքսանդրապոլի մի քանի ազգասեր եւ բարեպաշտ պարոններ, տեղեկանալով, որ սկսվել է Ս. Գայանյան վանքի դպրոցի շինարարությունը, հավաքել եւ իրեն էին հանձնել «հարիւր եւ չորս ռուբլի 40 կ-ի նպաստ նոյն շինութեան» («Արարատ», 1873, թիւ 8, էջ 313): Նույն ամսագրի հաղորդմամբ՝ երբ Հովհաննես Հովնանյանցը ուխտի է գալիս Ս. Էջմիածին եւ տեսնում Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու բարեմիտ ձեռնարկներն ու բարեկարգությունները, նկատելի գումար է նվիրաբերում Վեհափառ Հայրապետի «ազգաշահ նպատակների անվթար իրագործման համար» (*Մ. Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 160):

Շարունակելի

Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Զանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.02.2023 թ.
Տպաքանակը՝ 1225